

31.08.2022

**Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի ղեկավար
պարոն Դ. Հարությունյանին**

Հարգելի պարոն Հարությունյան,

Ցանկանում եմ տեղեկացնել, որ Հայաստանի սոցիալական աշխատողների ասոցիացիան (այսուհետ՝ Ասոցիացիա) «Մարդը կարիքի մեջ» հասարակական կազմակերպության (ՀԿ), Տեխնիկական համագործակցության և զարգացման գործակալության (ACTED), և «Առաքելություն Հայաստան» ՀԿ-ների հետ համագործակցությամբ՝ 2021 թվականից Եվրոպական միության աջակցությամբ իրականացնում են «*REACT. հակամարտությունից տուժած անձանց հումանիտար աջակցության և ինտեգրման*» ծրագիրը: **Ծրագիրը** նպատակ ունի աջակցելու Հայաստանի մարզերում բնակվող **ավելի քան 17 հազար** տեղահանված և տեղացի քաղաքացիներին՝ բարելավելու նրանց կենսագործունեությունը:


REACT ծրագրի շրջանակում Ասոցիացիան հիմնում է **Երեխայի և ընտանիքի 9 կենտրոն** Հայաստանի հինգ մարզերում (*Սյունիք՝ Սիսիան, Տաթև, Վայոց ձոր՝ Մալիշկա, Ջերմուկ, Տավուշ՝ Դիլիջան, Կոտայք՝ Արուլյան, Չարենցավան, Գեղարքունիք՝ Վարդենիս, Գեղամասար*) և Երևանում նպաստելու հակամարտությունից տուժած բնակչության սոցիալ-հոգեբանական վերականգնմանը: Նման ծառայության հիմնումը թույլ կտա սոցիալ-հոգեբանական աջակցությունը հասանելի դարձնել համայնքի բոլոր երեխաների և ընտանիքների համար՝ բարձրացնելով նրանց դիմակայությունը և նպաստելով համայնքային զարգացմանը:

Մալիշկա համայնքում Երեխայի և ընտանիքի կենտրոնի հիմնման նպատակով խնդրում ենք Ձեր աջակցությունը՝ Մալիշկայի համայնքապետարանի տարածքում սենյակի անհատույց տրամադրման հարցում: Սույն ծրագրի շրջանակներում Ասոցիացիան կնվիրաբերի համապատասխան կահույք և տեխնիկա՝ կահավորելով նշված սենյակը սոցիալ-հոգեբանական ծառայությունների տրամադրման համար, ինչպես նաև կտրամադրի շարունակական մասնագիտական աջակցություն տեղի մասնագետներին:


Նախապես շնորհակալ ենք համագործակցության համար:

Սիրա Անտոնյան

Հայաստանի սոցիալական աշխատողների ասոցիացիայի նախագահ



Handwritten signature of Sirya Antonyan.



Կատարող
Տաթև Ղազարյան
094 535204